«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ |
| ԱՌԱՐԿԱ | ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ |
| ՀԵՂԻՆԱԿ | ԻՐԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ |
| ՄԱՐԶ | ՇԻՐԱԿ |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | «ՀՈՌՈՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

Ներածություն……..... 3

Բովանդակություն…….....…6

Եզրակացությաւն……15

Օգտագործված գրականության ցանկ……17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը:

**Բ.Ֆ. ՍՔԻՆԵՐ**

Հանրակրթության բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը և տրամաբանությունը պայմանավորում են ինչպես ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի, այնպես էլ ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն:

Արդյունավետ դասավանդման համար ժամանակակից դպրոցում անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողունակություն և հմտություն:

Գոյություն ունեն դասավանդման **երեք կարևոր հիմնախնդիրներ**: Դրանցից առաջինը՝ **ինչ սովորեցնելը**, ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական-իմացական արժեք՝ գիտելիք, մատուցվում է սովորողներին, երկրորդը՝ **ինչու սովորեցնելը** կրթության բովանդակությունը կազմող կարողունակություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը, իսկ երրորդը՝ **ինչպես սովորեցնելը**, պայմանավորում է դասավանդման կերպը՝ եղանակը, միջոցներն ու ձևերը, այն, ինչ կազմում է ուսուցման մեթոդաբանությունը:

Թեպետ արդյունավետ դասավանդում կազմակերպելու տեսակետից մեթոդների տեսությունն ամենակարևորներից է, սակայն այն ամբողջական չէ: Այն դառնում է ամբողջական երբ ուսուցման գործընթացում մեթոդները հմտորեն համադրում և կիրառում ենք տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների հետ և դրանք օգտագործում որպես տեղեկատվության հիմնարար գործիք: ՏՀՏ-ները ամենուր են, և այդ պատճառով մենք պետք է դրանք սովորենք: Երեխաներն այսօր լավ են գիտակցում, որ տիրապետելով համակարգչին կարող են ոչ միայն ակադեմիական լավ կրթություն ստանալ, այլ նաև հետագայում ձեռք բերել լավ աշխատանք, հնարավորություն ստանալ օգտվելու տեղեկատվական գրեթե անսահման պաշարներից, աշխարհի ամենահարուստ

գրադարաններից։ Տեխնոլոգիական գրագիտությունը համարվում է ուսումնառության հիմնական, հիմնարար օղակ, որն ուղղված է ուսումնական արդյունավետությանն ուղղված ակադեմիական նպատակների իրագործմանը։ Տեխնոլոգիաները պետք է խորացնեն ուսումնառությունը, դրանք սոսկ գործիքներ են, որոնց արդյունավետությունը պայմանավորվում է ոչ թե դրանց գոյությամբ, այլ նրանով, թե ինչպես են դրանցից օգտվում։ Սրանց կիրառումը պետք է նպաստի կրթության որակի բարձրացմանը՝ այս գործիքները ուսուցման և ուսումնառության մեջ կիրառելու նոր ուղիներ մշակելու միջոցով։

ՏՀՏ գործիքների կիրառումը ուսումնառության գործընթացում նոր հնարավորություններ է բացում յուրաքանչյուր առարկան դասավանդելու հարցում, բարելավում է ուսումնառության արդյունավետությունը, սովորողների ինտելեկտուալ մակարդակը, սերմանում ինքնուսուցման հմտություններ և կարողունակություններ, ինքնակազմակերպում և հեշտացնում գործնական խնդիրների լուծումը։ Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը դասարանում թույլ է տալիս յուրաքանչյուր դասը դարձնել ոչ սովորական, պայծառ, հարուստ, հետաքրքիր, արդյունավետ ու հեշտ հիշվող։ ՏՀՏ-ն կարող է շատ բան առաջարկել այն բանի շնորհիվ, որ այն շատ բազմակողմանի ռեսուրս է։ ՏՀՏ-ների ներդրումը և կիրառումը կրթության ոլորտում տեղեկատվական հասարակության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկն է։ Այն զգալիորեն արագացնում է գիտելիքների և մարդկության կուտակված տեխնոլոգիական և սոցիալական փորձի փոխանցումը ոչ միայն սերնդից սերունդ, այլև մեկից մյուսին։

Մի խոսքով ՏՀՏ-ները պետք է լինեն գլխավոր դերակատարը ուսումնառության գործընթացում։

Պետք է առանձնակի արժեք տալ համագործակցային ուսուցման առանձնահատկությունները ուսուցման գործընթացում ՏՀՏ գործիքների կիրառմամբ՝ ավելի հեշտացնելով ու բացահայտելով սովորողների հնարավորությունները, ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով։

Այսպիսով մեր **գլխավոր նպատակն** է՝ ներկայացնել տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքների կիրառման հնարավորությունները ուսումնառության գործընթացում, համադրելով համագործակցային մեթոդը՝ ապահովելով սովորողի անհատական զարգացումը կրթական գործընթացում վերարտադրողական գործունեության մասնաբաժնի նվազեցմամբ:

- Ձեռք բերել արդյունավետ ՏՀՏ աշխատանքային սովորություններ:
- Կիրառել ՏՀՏ-ն որպես լայնակի բովանդակություն և գործիք առարկաները մշակելու համար:
- Աշակերտին մղել ինքնաճանաչման, ինքնաբացահայտման:
- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ.
- Դասը դարձնել ժամանակակից (տեխնիկական միջոցների կիրառման առումով).
- Դասը մոտեցնել ժամանակակից երեխայի աշխարհայացքին, քանի որ նա ավելի շատ նայում և լսում է, քան կարդում և խոսում, նախընտրում է օգտագործել տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված տեղեկատվությունը.
- Խմբային աշխատանքի միջոցով զարգացնել համագործակցային հմտություններ և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ).
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցող:

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

**Ջեյմս Ուիլյթսոն**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն զարգացման գործում կարևոր ձևը պատկանում է կրթությանը և գիտությանը: Ներկայումս ամբողջ աշխարհում զարկ է տրվում կրթության բովանդակության վերակառուցման ուսուցման կազմակերպման նոր ժամանակակից հարիր ձևերի որոնմանը: Կրթության կազմակերպման մեջ անգնահատելի է ուսուցչի դերը: Ուսուցչի կողմից նոր մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառումը օգնում են սովորողներին համագործակցելու, վերլուծելու, խմբավորելու և կշռադատելու հմտություններ ու կարողություններ ձևավորելու գործընթացում:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընրությունն է:



**Համագործակցային ուսուցման առավելությունները**

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնություն, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն։ Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ։

Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը։

Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում։

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ։ Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման։ Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է։ Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ։ Այդ մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ։ Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ։

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողունակությունները։ Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա ՏՀՏ ոլորտում որոշ գիտելիքներ։

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է։ Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ։ Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը։ Պետք է հնարավորություն տալ մասնակիցներին նյութը ներկայացնել բազմաբնույթ մտածողության միջոցով։ Այսօր առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապը, որը

ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից է: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է սովորել խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնել իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Այն դասարաններում, որտեղ համագործակցային ուսուցման մեթոդ են կիրառում, աշակերտները հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գ իտելիքի որոնման գործընթաց՝ առավել ևս երբ համատեղում են ՏՀՏ-ները: Եթե նախկինում մեծ ձեռքբերում էր համարվում այն, որ սովորողը կարողանում է օգտվել համակարգչից և համացանցում որոնել անհրաժեշտ ինֆորմացիան, այսօր զարմացնում են այն աշակերտները, ովքեր չեն տիրապետում համակարգչային տարրական գրագիտությանը: Այս դեպքում ևս մեծ անելիք ունի յուրաքանչյուր ուսուցիչ: Նախ ուսուցիչն ինքը պետք է տիրապետի համակարգչային ծրագրերին, ինչպես նաև իմանա վեբ-կայքերից օգտվելու պարզագույն կանոնները: Նրա խնդիրն է կարողանալ սովորողներին ներգրավել տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, վերլուծելու, համակարգելու, որը կօգնի աշակերտի մոտ զարգացնել ինքնուրույն, ստեղծագործական, վերլուծական մտածողությունը:

Ուսուցչի դերն այստեղ ուղղորդելն է, ճիշտ ճանապարհ ցույց տալը և սովորողներին կողմնորոշել ինֆորմացիայի գլխապտույտ հոսքում: Աշակերտները կարող են նաև ինքնուրույն ստեղծել օրվա դասի թեմային վերաբերող ցուցադրական նյութեր: Դա կօգնի նրանց ավելի լավ յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև կզարգացնի ստեղծագործական միտքը: Սովորողներին ներգրավելով նման աշխատանքներում՝ ուսուցիչը կկարողանա հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ: Միշտ էլ աշխատանքը համակարգչի հետ շատ հետաքրքիր է: Այս դեպքում աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները:

Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների ստեղծագործական կարողունակությունները, նպաստում է լեզվական հնարավորությունների զարգացմանն ու կատարելագործմանը:

Համագործակցային ուսուցումը տեխնիկա է, որը թույլ է տալիս աշակերտներին ոչ միայն միմյանցից սովորել, այլ նաև ձեռք բերել միջանձնային կարևոր հմտություններ:

Այսօր գոյություն ունեն բազմաթիվ կրթական կայքեր, ֆորումներ, հավելվածներ և ծրագրեր, որոնք հենց այդ նպատակին են ծառայում: Տարեցտարի ավելանում են դիդակտիկ նյութերը, որոնք ստեղծվել են ՏՀՏ-ների օգնությամբ: Իսկ առանց դրանց՝ հետ ես ընկնում թե՛ կյանքի ռիթմից, և թե՛ ուսուցման որակի բարելավմանն ուղղված գործընթացներից:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում ունի դրական ազդեցություն, ինչը

- Բարելավում է սովորողների ցուցաբերած արդյունքները և բարձրացնում ուսուցիչների դասավանդման որակը:
- Ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան և հեշտացնում է նյութի յուրացման ընթացքը.
- Հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա.
- Հնարավորություն է տալիս լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր ու տպավորիչ
- Ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ.
- Մեծանում է դիտողականության մակարդակը:

Բավական է նշել, որ արտադասարանական միջոցառումներն առանց տեսացրիչների անիմաստ են դառնում:

Քանի որ դպրոցական կրթության ներկա փուլում շատ կարևոր է նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ուսուցման գործընթացում և համակարգիչը դպրոցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, ապա առաջին հերթին անհրաժեշտ է տիրապետել և հետո կիրառել դրանք:

ՏՀՏ-ի կիրառումը ցանկացած առարկայի դասերին էապես փոխում է սովորողի վերաբերմունքը և՛ առարկայի և՛ դպրոցի հանդեպ, ուսման գործընթացը դարձնելով շատ հետաքրքիր: ՏՀՏ ի օգտագործումը որակապես փոխում է թե ուսուցչի, և թե աշակերտի դերը, ձևավորում է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ավանդականից տարբեր մի նոր որակ:

Չմերժելով ավանդականը, այն համադրում ենք նոր մոտեցումներով՝ ստանալով մի քանի անգամ ավելի բարձր արդյունավետություն, գրավիչ դաս, հետաքրքիր ու մոտիվացնող կրթություն, դասին աշակերտների գրեթե 100 տոկոս ներգրավվածություն: Աշակերտները մասնակցում են քննարկումներին, բանավիճում, առաջադրում նոր վարկածներ: Այսպիսի պարագայում ուսուցիչն ավելի շատ կատարում է աշակերտի գործունեությունը, կազմակերպողի դերը: Բարձրանում է ուսուցչի ստեղծագործական ազատությունը և ինքնուրույնությունը: Իսկ ազատությունն ուղեկցվում է չափորոշչային պահանջների ապահովման համար պատասխանատվության մեծացումով:

ՏՀՏ-ները կարելի է կիրառել դասապրոցեսի տարբեր փուլերում (թեմատիկ աշխատանքների վերլուծություն, նոր նյութի հաղորդում, թեմայի բանավոր և գրավոր ամփոփում, արտադասարանական միջոցառումներ և այլն): Համակրգչի օգտագործմամբ նոր նյութն ու տեղեկատվությունը հաղորդելիս կարելի է կազմակերպել դաս-դասախոսություն՝ շնորհանդեսի տեսքով, որը հնարավորություն կտա սևեռել սովորողի ուշադրությունը նյութի առավել կարևոր հարցադրումների վրա միջառարկայական կապ ստեղծելով տարբեր առարկաների հետ:

ՏՀՏ-ների միջոցով ինձ համար ավելի դյուրին դարձավ ուսման նկատմամբ աշակերտակենտրոն մոտեցման իրականացումը: Իմ աշխատանքում ես օգտագործում եմ պատրաստի ծրագրեր, ստեղծում եմ իմ սեփական շնորհանդեսը, օգտագործում եմ համացանցը և ՏՀՏ գործիքները ուսումնառության կիրառման գործընթացում: Covid-ի ժամանակ, երբ դպրոցն անցավ հեռավար կրթությանը, ՏՀՏ-ի կիրառումը բավականին հեշտացրեց ուսուցչի աշխատանքը:

**Հետազոտության մեթոդիկան**

Աշխատանքը շատերին հայտնի մեթոդի կիրառման մի առաջարկ է՝ ուսուցիչների մեթոդական մոտեցուները հարստացնելու նպատակով: Առաջարկում եմ ինֆորմատիկայի դասերին դասի իմաստի ընկալման փուլում մեր կողմից հաճախակի օգտագործվող «Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդի կիրառման հնարավորություն որպես տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման, համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև: Մեթոդը նպատակահարմար է կիրառել այն թեմաների դասավանդման ժամանակ, որոնք բավականին ծավալուն են:

**Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությանը:**

Նպատակի ուսումնասիրությանն ուղղված թիրախային կարողունակությունը թվային և մեդիա կարողունակությունն է: «Սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին, պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա»:

Նպատակի ուսումնասիրությունը կնպաստի նաև կրթության բովանդակության նորացման հիմքում ընկած հանգուցային հետևյալ կարողունակությունների՝ Սովորել սովորելու, Լեզվական գիտելիք և գրագիտություն, Մշակութային, Ինքնաճանաչման և սոցիալական կոմպետենցիաների զարգացմանը:

**Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝**

**1. Դրական փոխկապվածություն** - Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

**2.Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն** – խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

**3.Անհատական պատասխանատվություն և հաշվետվություն –** խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

**4.Սոցիալական հմտություններ** – խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

**5.Խմբային գործընթաց** – խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է, որոնք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների հետադարձ կապը:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով՝ ներկայացնելով մանկավարժական կառուցողական մեթոդներ: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում; Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

- առաջադրանքի սահմանումը,
- տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,
- տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը,
- տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,
- սինթեզը,
- գնահատումը:

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

Այս եղանակի փուլերն են՝

- քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում: Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.
- յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.
- քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.
- փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին.
- խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված <<քննարկման խաղանիշեր>> /3-6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից/:
- խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարման

մեջ ներգրավելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդաներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս նեկայացնելու փաստարկներ ունի.

- իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր խաղանիշերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն օգտագործելով՝ ուսուցիչը ոչ միայն կառավարում է քննակման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ: ՈՒսումնական խմբի անդամների միջև փոխազդեցություն կազմակերպելու գաղափարը ներդրվել է մի շարք մանկավարժական ուղղություններում, որոնք պատմականորեն կայացել, առանձնացվել ու մանկավարժության մեջ ամրագրվել են որպես յուրատեսակ մանկավարժական ավանդույթներ: Դրանց թվին են պատկանում այնպիսի հայտնի ուղղություններ, ինչպիսիք են

Բել – Լանկաստերյան համակարգը. - դեռ XVIII դարի վերջերից սկիզբ առած, հետագայում լայն տարածում գտած մեթոդներից է: ՈՒսումնական պարապմունքների կազմակերպման հիմնական սխեման հետևյալն է. ուսուցիչն ուսումնական խմբի անդամներից ընտրում է մի քանի ընդունակ աշակերտների և հիմնականում աշխատում նրանց հետ: Ընտրված աշակերտներից յուրաքանչյուրին կցվում է աշակերտական փոքրաքանակ խումբ, որտեղ նրանք կատարում են ուսուցչի դերը: Այս ձևը հնարավորություն է տալիս մի կողմից՝ որոշ չափով հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ լուծել մանկավարժական կադրերի պակասի պրոբլեմը:

Բրիգադային մեթոդը – XX դարի առաջին կեսին լայն տարածում գտած մոտեցումներից է: ՈՒսումնական խումբը բաժանվում է փոքր ենթախմբերի՝ բրիգադների: Յուրաքանչյուր բրիգադում փոխօգնության և համագործակցության միջոցով իրագործվում են ուսումնական նպատակները, իսկ յուրաքանչյուր աշակերտի արդյունքը գնահատվում է ընդհանուր բրիգադի ցուցանիշներով:

Ռիվինյան երկխոսութենական զուգորդությունների մեթոդը – արդեն XX դարասկզբին որոշ մանկավարժներ ուսումնական պարապմունքներ կազմակերպելիս սկսեցին օգտագործել աշակերտների՝ զույգերով հաղորդակցման ձևերը: Այս նորամուծության հիմնադիրն ու կիրառողը Ա. Ռիվինն էր: Նրա կազմակերպած պարապմունքներն առաջին հայացքից բավական պարզ էին:

Սովորողներից յուրաքանչյուրն իր ուսումնական նյութը յուրացնելու համար աշխատում էր դասղեկներից մեկի հետ: Որոշ ժամանակ համատեղ աշխատելուց հետո նա այդ դասընկերոջից բաժանվում էր, մոտենում մեկ այլ աշակերտի և սկսում աշխատել նրա հետ: Հաղորդակցվելով զույգերով՝ մեկը մյուսի հետ, աշակերտները կատարում էին տարբեր աշխատանքներ՝ իրար բացատրում էին նոր թեմաները, համատեղ լուծում խնդիրներ, քննարկում տարբեր հարցեր, մեկը ստուգում էր մյուսի՝ նյութի յուրացման մակարդակը և այլն: Սակայն արտաքնապես պարզ թվացող այսպիսի պարապմունքներն ունեին իրենց ներքին տրամաբանությունը,

Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը, նպատակաուղղվածությունը և կազմակերպվածությունը: Հետագայում Ռիվինի հայտնագործությունները զարգացվեցին ու կիրառվեցին իր աշակերտների ու հետնորդների կողմից: Ճարժման ներկայացուցիչների /Ռիվին, Վիխման, Բրեյտերման, Կոլեսնիկովը և ուրիշներ/ մտքով անգամ չէր անցնում, որ իրենց հայտնագործությունները ոչ միայն սովորական մանկավարժական հնարքներ են, այլև կարող են հիմք հանդիսանալ ընդհանրապես ուսուցման կազմակերպման նոր եղանակի անցման համար:

Մյուս մեզ հայտնի մանկավարժական տեխնոլոգիան, համագործակցության մանկավարժական տեխնոլոգիան է:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիաները ուղղված են կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը: Ժամանակակից համագործակցային մանկավարժական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվ, անձնային կողմնորոշում ունեցող ուսուցում, որը նպաստում է հաղորդակցական և գիտակցական զարգացմանը:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան իմաստավորվում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտների զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիաները միտված են ոչ թե բարդացնել ուսուցման գործընթացը, այլ՝ առավել դյուրին դարձնել այն: Ինչպես նաև ուսուցիչը այդ մեթոդներն ու տեխնոլոգիաները կիրառելիս պետք է անպես հարմարեցնի այդ ամենը, որ արդյունքում բոլոր աշակերտների համար օգտակար լինի իր կողմից կիրառված մեթոդը կամ տեխնոլոգիան:

# Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ուսուցման ժամանակակից մեթոդների հիմքում՝ ուսուցման գործընթացում, սովորողների ինքնուրույնությունն է, նրանց անմիջական ակտիվ մասնակցությունը այդ գործընթացին, ՏՀՏ գործիքների համատեղ կիրառումամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դասերը ոչ միայն ընդլայնում և համախմբում են ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները, այլև զգալիորեն բարձրացնում են աշակերտների ստեղծագործական և մտավոր ներուժը: Քանի որ նրանց մեջ ապացուցելու երևակայությունն ու ցանկությունը մեծ է, արժե սովորեցնել հնարավորինս հաճախ արտահայտել սեփական մտքերը, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ:

Վստահ եմ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կարող է փոխակերպել ավանդական դպրոցական առարկաների ուսուցումը՝ հիմնավորելով երեխաների աշխատանքը, օպտիմալացնելով ուսումնական նյութի ընկալման և մտապահելու գործընթացները և որ ամենակարևորն է՝ սովորելու նկատմամբ երեխաների հետաքրքրությունը անընդհատ բարձրացնելով ավելի բարձր մակարդակի: ՏՀՏ – ներն իրենց աշխատանքում օգտագործող ուսուցիչները եկել են այն եզրակացության, որ տեղեկատվական տեխնոլոգիաները միայն փնտրողների համար են, այն ուսուցիչների համար, ովքեր սիրում են սովորել նորը՝ ձգտելով կատարելագործման: ՏՀՏ – ները նրանց համար են, ովքեր անտարբեր չեն իրենց մասնագիտական կարողությունների մակարդակի նկատմամբ, ովքեր անհանգստացած են, թե որքանով է նա՝ ժամանակակից դպրոցի ուսուցիչը, համապատասխանում այս դարի պահանջներին: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ դասարանում ՏՀՏ կիրառմամբ կրթական գործընթացը միտված է տրամաբանական և քննադատական մտածողության, երևակայության և անկախության զարգացմանը: Երեխաները հետաքրքրված են, ներգրավված ստեղծագործական որոնման մեջ և ոչ միայն երեխաները, այլև՝ նրանց ծնողները: Եզրափակելով՝ ուզում եմ ասել հետևյալը, որ այս տիպի աշխատանքը սովորողին պասիվ օբյեկտից վերածում է ակտիվ, աշխատող սուբյեկտի, որի ընթացքում խթանվում են ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և հետազոտելու կարողությունը:

Սխեմա 1, Պասսիվ մեթոդ

Սխեմա 2, Ակտիվ մեթոդ

Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաները դիտարկել որպես դասվանդման մեթոդներից մեկն ու ամենակարևորը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մելանյա Աստվածատրյան, Գայանե Թերզյան, Արտաշես Թորոսյան. Հայկ Շարխաթունյան - Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում։ /ՈՒսուցչի ձեռնարկ/ - 2004, էջ 24, 36, 45։

2. Ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ,2008թ.

3.Լ. Թորքոմյան «Մանկավար-ական հիմունքներ»։

4.Ամիրջանյան, Սահակյան «Մանկավարժություն» 2005թ։

5. Համացանց